600.0250.03.07.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

3 հուլիսի 2019 թվականի №250Լ
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-Ի №338Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի սեպտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կանոնադրությունը հաստատելու մասին» №338Լ որոշման հավելվածի 34-րդ և 35-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«34. Հանձնաժողովի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1) իրավաբանական և լիցենզավորման վարչություն.
2) հեռահաղորդակցության վարչություն.
3) սակագնային քաղաքականության վարչություն.
4) ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչություն.
5) ներքին աուդիտի բաժին:

35. Հանձնաժողովին աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1) գործերի կառավարման վարչություն,
2) անձնակազմի կառավարման բաժին.

3) հաշվապահական հաշվառման և սոցիալական ծրագրերի իրականացման բաժին.

4) միջազգային համագործակցության բաժին:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
3 հուլիսի 2019թ.